Յունաց, և չարարեալ ինչ Լատինաց, և այսպէս եկաց անդ զաւուրս Ե · եւ տեսեալ թէ լռեալ են վանօրայք, առաքեաց յԵրուսաղէմ զփոխանորդն իւր եւ զքաղաքապետն, և նոցա կոչեալ զերիս փոխանորդս, առաջի եդին նոցա զերիս խնդիրս · տալ գիր չբողոքելոյ երբէք, յորժամ քակեսցէ Կուսակալն զվանօրայս եւ յաւարի մատնեսցէ զինչս նոցա ։ Երկրորդ հանել զՄահմետականս 'ի միջոյ ապստամբ ապաստանելոց 'ի վանօրայս եւ տալ 'ի ձեռս նոցա ։ Եւ կամ երթալ երից փոխանորդաց եւ անկանիլ յոտս նորա, զի շնորհեսցէ զյանցանս մեղապարտաց ։ Եթէ ոչ առնիցէք զմին յերից աստի, Կուսակալն ոչ ելանէ անտի՝ եւ ոչ եւս առաջնորդել ուխտաւորաց իւրոց, առաքեցին զնոսա յառանձին տեղի ինչ խորհիլ 'ի միասին ։ Եւ կոչեալ զթարգմանս Յունաց և Լատինաց յորդորանօք առաքեցին առ Քարտուղարն Յոյն՝ կանխել նորա առ Կուսակալն և սահմանել զտուժն, և յետ այնորիկ տանել ըզփոխանորդսն 'ի բանակն աղաչել զնա ։ Մինչչեւ հասեալ փոխանորդաց 'ի կէս ճանապարհն՝ դարձոյց զնոսա յետս Քարտուղարն, և պատուիրեաց նոցա գրել 'ի Բեթղեհէմ, զի վանօրայք մոմեղինօք լուցելովք երեւեսցին առաջի կուսակալին, ուր ետուն ասել նմա՝ հաճեալ եմ ընդ Լատինս եւ ընդ Յոյնս, (թէպէտ նոքա սպանեալ էին 'ի մարտին զզօրս թուով այծից) · այլ ընդ Հայս՝ ոչ երբէք ։ Ապա գլխատեաց զերկուս կալանաւորս՝ և երկուց ոմանց զգեցոյց վերարկու պատուոյ, և եդ հարկս 'ի վերայ գիւղին Բեթղեհէմի 45 քսակս արծաթոյ, զի եթէ կռուեսցին միասնգամ տուժեսցեն ։ Եւ 'ի դարձի նորին 'ի Քեբրոնէ մինչ կային կանգնեալ քրիստոնեայք 'ի վերայ ճանապարհին, ինքն անցանէր երիվարաւն՝ ասէ ցՓոխանորդն Հայոց լու 'ի լու ամենեցուն, «Ծերունի նիստ այդր և լեր լրտես, զի 'ի դարձուցանելն զձեզ Քարտուղարին 'ի կէս ճանապարհէ զերծուցիք զգլուխս ձեր 'ի սրոյ ։ Իսկ Յոյն քարտուղարն նախ քան զդառնալ կուսակալին 'ի Քեբրոնէ էառ յերից վանաց 70 քսակս արծաթոյ, վասն ապստամբելոց Բեթղեհէմի, որ և անկաւ բաժին Հայոց 11,668 դահեկան · և վասն իւր էառ 800 ոսկի · 1 ժամացոյց · 1 մուշտակ · 1 ծըրար ազանելիք · 1 շալ և այլ ինչ · բովանդակ գումարն ե-